

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
Երևանի պետական համալսարանի  
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2021 թ. հոկտեմբերի 5-ին կայացած թիվ 2 նիստի

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցել են 32-ը:

**Օրակարգ՝**

1. Կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցման ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական դեկավարներ նշանակելու հարցը:
2. Կենսաբիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասխատեստ, կ.գ.թ., գիտաշխատող Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ 20TTSG-1F004 ծածկագրով «Հակաքաղցկեղային թերապիայում բուսական ծագման և քիմիաթերապետիկ միացությունների համակցումների կենսաբիմիական և իմունաբանական ուսումնասիրությունները» թեմայի ընթացիկ հաշվետվության հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ՝** Կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցման ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական դեկավարներ նշանակելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաբիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ս.Ս. Փոլայյանը, նույն ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կ.Ս. Թոշունյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կ.Ս. Ղազարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել թեկնածուական ատենախոսությունների թեմաները և նշանակել գիտական դեկավարներին:

**Հասմիկ Վարդանի Վարդումյան**

Թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Հանքային սնուցման ազդեցությունը հիդրոպոնիկ եղանակով մշակվող ելակի արտադրողականության և որոշ ֆիզիոլոգիական ցուցանիշների վրա», Գ.00.05 «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ, գիտական դեկավար՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Արամայիսի Ղազարյան:

## Ոուզան Արսենի Շուշանյան

Թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Գլխուղեղի տարբեր բաժինների ախտահյուսվածաբանական առանձնահատկությունները նեյրոդեգեներացիայի պայմաններում», գիտական դեկավար՝ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ, դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան:

## Լիանա Մանվելի Վանյան

Թեկնածուական ատենախոսության թեմա՝ «*Escherichia coli*-ում ջրածնի նյութափոխանակությունը և պրոտոնային ցիկլը զյուկոզի տարբեր կոնցենտրացիաների խմբման պայմաններում» Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, գիտական դեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ.Կ. Ա. Թոշունյան:

## Մերի Կարենի Իսկանդարյան

Թեկնածուական ատենախոսության թեմա՝ «*Ralstonia eutropha* մանրէի հետերոտրոֆ աճման տարբեր պայմաններում կենսաէներգէտիկական չափանիշների և *H2*-օքսիդացնող հիդրոգենազային ակտիվության ուսումնասիրում» Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, գիտական դեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Փոլադյան:

## Ոուզաննա Հրայրի Գևորգյան

Թեկնածուական ատենախոսության թեմա՝ «*Toxoplasma gondii*-ի բազմազանությունը, տարածվածությունը և մակարույժ-տեր փոխհարաբերությունները Հայաստանի որոշ մարզերի անասնաբուժական, ընտանի և վայրի կենդանիների շրջանում» Գ.00.08 «Կենդանաբանություն, մակարույժաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ, գիտական դեկավար՝ ԵՊՀ Կենսաբանության գ/հ ինստիտուտի կենդանաբանության լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Ս.Ս. Աղայան:

2. ԼՍԵՑԻՆ՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ., գիտաշխատող Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ 20TTSG-1F004 ծածկագրով «Հակարաղցեղեղային թերապիայում բուսական ծագման և քիմիաթերապետիկ միացությունների համակցումների կենսաքիմիական և իմունարանական ուսումնասիրությունները» թեմայի ընթացիկ հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Փոլադյանը: Թեմայի դեկավար՝ Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանը ներկայացրեցին ընթացիկ հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել կենսաքիմիայի, մանրէարանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասխատենտ, կ.գ.թ., գիտաշխատող Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանի՝ ՀՀ ԿԳՄՍՆ 20TTSG-1F004 ծածկագրով «Հակաքաղցկեղային թերապիայում բուսական ծագման և քիմիաթերապևտիկ միացությունների համակցումների կենսաքիմիական և խմոնաբանական ուսումնասիրությունները» թեմայի հետազա ֆինանսավորումը:

### 3. Ըսթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախազահ  
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.

Գիտական խորհրդի քարտուղար՝  
լոցենստ



Է. Ա. Գևորգյան

Ի. Վ. Շահազդյան